

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2021-2-1-Ա

ք. Երևան

21.04.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի ապրիլի 21-ի նիստում քննարկեց 2020 թվականի հուլիսի 14-ին արտոնագրային հավատարմատար Վանիկ Մարգարյանի կողմից ներկայացված՝ «Գուապո» ՍՊԸ ընկերության (Երևան, Թումանյան 32, AM) «Pomodoro» (No20192257) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում 35-րդ դասի ծառայությունների համար պահպանվող «promodoro» (Promodoro Fashion GmbH, Am Gatherhof 57, 40472 Düsseldorf (DE), IR 831147, 22.06.2004) և 43-րդ դասի ծառայությունների համար «ROSSOPOMODORO» (SEBETO S.p.A. Via Larga, 15, I-20122 MILANO (IT), IR-803712, 07.04.2003) ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի, 122-րդ կետի 2-րդ, 4-րդ, 9-րդ, 10-րդ ենթակետերի համաձայն համեմատվող ապրանքային նշաններն ունեն ձայնային (հնչյունային) նմանություն, որը որոշվել է նշանը կազմող մոտ և համընկնող հնչյունների առկայությամբ, համընկնող վանկերի առկայությամբ և դրանց դասավորվածությամբ, նշանների համընկնող մասերի բնույթով՝ «P(r)o-mo-do-ro», ինչպես նաև նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով՝ տվյալ դեպքում հայտարկված

բառային ապրանքային նշանի «Pomodoro» բառն ամբողջովին ներառված է գրանցված համակցված ապրանքային նշանի «ROSSOPOMODORO» բառի մեջ՝ կազմելով դրա վերջնամասը:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին, քանի որ հայտատուն ներկայացրել է նամակ համաձայնագիր հակադրվող ապրանքային նշաններից մեկի իրավատիրոջ կողմից և հակադրվող մյուս նշանի առումով բողոքարկողը հրաժարվել է ապրանքային նշանի հայտի մեջ նշված 35-րդ դասի ծառայություններից:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ ներկայացված նամակ համաձայնագրի առկայության դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա է գրանցման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

Արտոնագրային հավատարմատար Վանիկ Մարգարյանի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «Pomodoro» (No20192257) ապրանքային նշանը գրանցել հայտարկված 43-րդ դասի ծառայությունների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում: